ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՌԻՓՍԻՄԵ ՄՀԵՐԻ

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԽՄԲԱՅԻՆ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2020

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ХАЧАТРЯН РИПСИМЕ МГЕРОВНА

ПРОБЛЕМЫ ПРЕДУПРЕЖДЕНИЯ ГРУППОВОЙ ПРЕСТУПНОСТИ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ В РА

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.05 – “Уголовное право и криминология; уголовно-исполнительное право”

ЕРЕВАН – 2020

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ս. Վ. Առաքելյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ **Ա. Ռ. Մարգարյան**
իրավաբանական գիտությունների թեկնածու **Ժ. Ա. Ստեփանյան**

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2020 թվականի ապրիլի 23-ին, ժամը $14^{\underline{30}}$-ին ՀՀ ԲՈԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (Երևան – 0025, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2020 թվականի մարտի 12-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար՝ իրավ. գիտ. թեկ., դոցենտ **Տ. Հ. Սուջյան**

Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юридических наук, профессор **С. В. Аракелян**

Официальные оппоненты: доктор юридических наук, доцент **А. Р. Маргарян**
кандидат юридических наук **Ж. А. Степанян**

Ведущая организация: **Институт философии, социологии и права НАН РА**

Защита диссертации состоится 23-го апреля 2020 г. в $14^{\underline{30}}$ часов на заседании Специализированного совета ВАК РА 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, Ереван, Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Ереванского государственного университета.

Автореферат разослан 12-ого марта 2020 г.

Ученый секретарь специализированного
совета: кандидат юрид. наук, доцент **Т. О. Суджян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Հանցավորության կանխարգելումը պետության քրեական քաղաքականության դրսևորումներից է: Այս առումով կարևորվում է անչափահասների հանցավորության կանխարգելման հիմնախնդիրների ուսումնասիրությունը: Ընդհանուր հանցավորության ապագա համարվող անչափահասների հանցավորության բազմակողմանի և համալիր հետազոտությունը հանցավորությանը հակազդելու քաղաքականության առաջնային ուղղություններից մեկն է:

Ցանկացած պետությունում երեխաները պետք է գտնվեն արտոնյալ կարգավիճակում: Բացառություն չէ և մեր պետությունը, որը հոգ է տանում նոր սերնդի մասին՝ նրա կենսագործունեության բոլոր ոլորտներում: Անչափահասների նկատմամբ հատուկ ուշադրությունը պայմանավորված է նրանց բնութագրիչ մի շարք առանձնահատկություններով՝ անպաշտպանվածությամբ, անօգնականությամբ, կենսափորձի պակասով, բարձր հուզականությամբ, անհավասարակշռությամբ, խոցելիությամբ: Անչափահասը ձգտում է ուշադրություն գրավել, տարբերվել մյուսներից: Նրան բնորոշ է ընկերության և խմբային համերաշխության զգացողությունը: Ուստի, անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման քաղաքականությունը պետք է կառուցել՝ նախ և առաջ հաշվի առնելով անչափահասների այս առանձնահատկությունները:

Անչափահասների խմբային հանցավորության ընդհանուր կանխարգելման համակարգում առաջնահերթ նշանակություն պետք է ունենան այն միջոցները, որոնք ուղղված են անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը, առողջության պահպանմանը, ընտանիքի աջակցմանը և ամրապնդմանը, կրթության, աշխատանքի և ժամանցի լավ կազմակերպմանը, բացասական ազդեցություններից, հանցավոր գործունեության մեջ ներգրավվելուց պաշտպանելուն և այլն:

Անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման ընդհանուր-սոցիալական միջոցները պետք է ուղղված լինեն առաջին հերթին բարելավելու դեռահասների դաստիարակությունն ընտանիքում, դպրոցում, ձևավորելու նրանց ժամանցը:

Մինչ օրս անչափահասների խմբային հանցավորությունն ուսումնասիրվել և քննարկվել է անչափահասների ընդհանուր հանցավորության համատեքստում: Արդյունքում բազմակողմանիորեն չեն ուսումնասիրվել և բացահայտվել անչափահասների խմբային հանցավորության առանձնահատկությունները, զարգացման միտումները, անչափահասների հանցավոր խմբերի տիպերը, խմբի կազմում հանցանք կատարած անչափահասի բնութագրիչ առանձնահատկությունները, անչափահասների խմբային հանցավորության պատճառներն ու պայմանները, հետևաբար՝ կանխարգելման հնարավորություններն ու միջոցները:

«Անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև մի շարք այլ հանգամանքներով: Նախ՝ մինչ օրս ՀՀ-ում չի կատարվել անչափահասների խմբային հանցավորության համալիր հետազոտություն, որի շնորհիվ հնարավոր կլիներ բացահայտել անչափահասների հանցավոր խմբերի ինչպես քանակական, այնպես էլ որակական բնութագիրը: Երկրորդ՝ եթե մինչև 2000թ. անչափահասների խմբային հանցագործություններում գերակշռում էին միայն անչափահասներից բաղկացած խմբերի կողմից կատարվող հանցավոր արարքները, ապա 2000թ-ից հետո աճում է խառը խմբերի կողմից կատարվող արարքների տեսակարար կշիռը: Երրորդ՝ չափահասներին բնորոշ արարքների կատարումն անչափահասների խմբերի կողմից: Մասնավորապես, ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի կողմից տրամադրած տվյալների համաձայն՝ վերջին տասնհինգ տարիների ընթացքում անչափահասների մասնակցությամբ խմբերի կողմից նախկինի համեմատ առավել հաճախ են կատարվել այնպիսի հանցանքներ, ինչպիսիք են մարդու առևանգումը, շորթումը, զենքի ապօրինի շրջանառությունը, սեքսուալ բնույթի բռնի գործողությունները և այլն:

Բացի այդ, կանխարգելելով անչափահասների խմբային հանցավորությունը՝ հակազդում ենք նաև կազմակերպված հանցագործությանը, քանի որ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ անչափահասների խմբերը ժամանակի ընթացքում ձեռք են բերում նոր որակներ և ձևեր, որը հավանական է դարձնում դրանց կազմակերպվածի վերաճումը:

Վերջապես, անչափահասների խմբային հանցավորության կանխարգելիչ գործունեությունը մինչ օրս կառուցվել է անհատական պրոֆիլակտի-

կայի շուրջ: Չթերագնահատելով այն՝ նկատենք, որ տվյալ դեպքում անչափահասը վտանգավոր է խմբի կազմում, քանի որ խումբ է մտել ինքնուրույն հանցանք կատարելու ունակությունից զուրկ լինելու պատճառով: Հետևաբար, առաջին հերթին պրոֆիլակտիկ ներգործության պետք է ենթարկել խումբը, հետո՝ անչափահասին:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտն են կազմում անչափահասների խմբային հանցավորությունը և դրա կանխարգելման հիմնական ուղղությունները:

Հետազոտության առարկան անչափահասների խմբային հանցավորության կրիմինալոգիական բնութագիրն է, անչափահասների հանցավոր խմբերի տիպերը, խմբի կազմում հանցանք կատարած անչափահասի բնութագրիչ առանձնահատկությունները, անչափահասների խմբային հանցավորության պատճառներն ու պայմանները, կանխարգելման հնարավորությունները, միջոցներն ու ձևերը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն անչափահասների խմբային հանցավորության կրիմինալոգիական վերլուծությունն է, դրա կանխարգելման հետ կապված խնդիրների բացահայտումը և դրանց լուծման հնարավորությունների վերաբերյալ առաջարկությունների մշակումը:

Այդ նպատակին հասնելու համար առաջ են քաշվել և լուծում ստացել հետևյալ խնդիրները՝

- սահմանել անչափահասների խմբային հանցավորության հասկացությունը,
- վերլուծել անչափահասների խմբային հանցավորության վիճակը, շարժընթացը, կառուցվածքը,
- առանձնացնել անչափահասների հանցավոր խմբերի տիպերը և վերլուծել դրանց առանձնահատկությունները,
- բացահայտել խմբի կազմում հանցանք կատարած անչափահասի անձի կրիմինալոգիական բնութագրի առանձնահատկությունները,
- վերհանել և ուսումնասիրել անչափահասների խմբային հանցավորությանը նպաստող հանգամանքները,

- կատարված հետազոտության արդյունքների հիման վրա մշակել և ներկայացնել անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման առաջարկություններ:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքը: Հանցավորության կանխարգելման հիմնախնդիրները բոլոր ժամանակներում գտնվում են գիտնականների ուշադրության կենտրոնում: Անչափահասների խմբային հանցավորության հիմնախնդիրներին, սակայն, անդրադարձել են ոչ բոլորը:

Խորհրդային ժամանակաշրջանի և արդի ռուս հետազոտողների գիտական աշխատություններում անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման հիմնախնդիրների ուսումնասիրություն հանդիպում ենք Լ.Մ.Պրոզումենտովի, Ի.Պ. Բաշկատովի, Ի.Պ. Լանովենկոյի, Բ.Մ. Բիկովի, Ռ.Մ. Բուլատովի, Ե.Ա. Խարշակի, Վ.Գ. Լուկաշևիչի, Ա.Պ. Մամոչկինայի, Ն.Ե. Մեդվեդովայի, Լ.Պ. Նիկոլայևայի, Գ.Մ. Պոպովայի, Ի.Ա. Բուրմիստրովի, Տ.Ն. Բուտորինայի, Օ.Ն. Տերեխովայի, Վ.Վ. Տրիֆոնովի գիտական աշխատություններում:

Հայաստանի Հանրապետությունում անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման հիմնախնդիրներին, որպես ինքնուրույն հետազոտության թեմա, ոչ ոք չի անդրադարձել: Այս խնդրին վերաբերվող որոշ հարցերին մասնակի անդրադարձել են՝ Ս.Առաքելյանը, Ա.Գաբուզյանը, Ա.Մարգարյանը, Տ.Սիմոնյանը և ուրիշներ, որոնք իրենց աշխատություններում ուսումնասիրել են անչափահասների հանցավոր խմբերի հետ կապված որոշ հարցեր:

Հետազոտության տեսական հիմքը ձևավորվել է անչափահասների խմբային հանցավորությանը նվիրված մասնագիտական գրականության աղբյուրներից: Դրանց շարքում հատկապես կարելի է առանձնացնել Լ.Մ.Պրոզումենտովի, Ի.Պ. Բաշկատովի, Ի.Պ. Լանովենկոյի, Բ.Մ. Բիկովի, Ռ.Մ. Բուլատովի, Ե.Ա. Խարշակի, Վ.Գ. Լուկաշևիչի, Ա.Պ. Մամոչկինայի, Ն.Ե. Մեդվեդովայի, Լ.Պ. Նիկոլայևայի, Գ.Մ. Պոպովայի, Ի.Ա. Բուրմիստրովի, Տ.Ն. Բուտորինայի, Օ.Ն. Տերեխովայի, Վ.Վ. Տրիֆոնովի և այլ գիտնականների աշխատությունները:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքերը: Հետազոտության իրավական հիմքն են կազմել Միավորված Ազգերի Կազմակեր-

պության Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան, Անչափահասների հանցավորությունը կանխելու վերաբերյալ 1990թ. դեկտեմբերի 14-ի ՄԱԿ-ի ուղենիշները (Ռիադի ուղենիշներ), ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները՝ անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ (Պեկինյան կանոններ), ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ քրեական օրենսգիրքը, ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը, «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքը, «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքը և այլ նորմատիվ իրավական ակտեր:

Հետազոտության փորձառնական հիմքն են կազմել՝

1) 2004-2018թթ. ընթացքում անչափահասների հանցավորության վերաբերյալ վիճակագրական տվյալները,

2) 2010-2017թթ. ընթացքում անչափահասների մասնակցությամբ խմբերի վերաբերյալ քննված 292 քրեական գործերի և դրանց կապակցությամբ կայացված դատավճիռների ուսումնասիրման արդյունքները,

3) 2010-2017թթ. ընթացքում խմբի կազմում հանցանք կատարած 100 անչափահասների շրջանում իրականացված սոցիոլոգիական հարցումների արդյունքները,

4) 2013-2018թթ. ընթացքում ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով 150 տեսուչների շրջանում իրականացված փորձագիտական հարցումների արդյունքները:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտության ընթացքում կիրառվել են դիալեկտիկական, վիճակագրական, անալիզի և սինթեզի, հարցազրույցի, սոցիոլոգիական (հարցում, դիտարկում, փաստաթղթերի վերլուծություն) մեթոդները, ինչպես նաև կատարվել է դատական ակտերի ուսումնասիրություն:

Հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթը կայանում է նրանում, որ հայրենական կրիմինալոգիայում առաջին անգամ փորձ է կատարվել իրականացնելու ՀՀ-ում անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման հիմնախնդիրների տեսական և գործնական բազմակողմանի և համընդգրկուն վերլուծություն: Հետազոտությունն իրականացվել է հայրենական և արտասահմանյան մի

շարք երկրների տեսական աղբյուրների, հետազոտությունների, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ և ընդհանուր իրավասության դատարանների դատավճիռների, որոշումների ուսումնասիրության հիման վրա:

Քննարկվող համատեքստում հետազոտվել են հայրենական կրիմինալոգիայում չուսումնասիրված այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են անչափահասների խմբային հանցավորության առանձնահատկությունները, զարգացման միտումները, անչափահասների հանցավոր խմբերի տիպերը, խմբի կազմում հանցանք կատարած անչափահասի բնութագրիչ առանձնահատկությունները, անչափահասների խմբային հանցավորության պատճառներն ու պայմանները, հետևաբար՝ կանխարգելման հնարավորություններն ու հիմնական ուղղությունները:

Ատենախոսության գիտական նորույթը դրսևորվում է նաև **պաշտպանության ներկայացվող հետևյալ դրույթներում՝**

1. Անչափահասների խմբային հանցավորության ոլորտում կրիմինալոգիական վերահսկողության օբյեկտ պետք է համարել հանրորեն վտանգավոր արարքներ կատարած 10-18 տարեկան անձանց, քանի որ շեղվող վարքագիծ դրսևորած, սակայն քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձանց պրոֆիլակտիկայի օբյեկտ դիտարկելը կնպաստի նրանց ապագա վարքագծի՝ հանցավորի վերաճելու հնարավորության սահմանափակմանը կամ չեզոքացմանը:

2. Խմբի հասարակական վտանգավորությունն առավել բարձր է, երբ նրա կազմում գործում են նախկինում դատապարտված և հանցավոր փորձ ունեցող մասնակիցներ (այդ թվում՝ անչափահասներ), քանի որ նրանց հետ շփումը բարձրացնում է անչափահասի հեղինակությունն իր հասակակիցների շրջանում՝ ապահովելով նրանց որոշակի «հոգեբանական կոմֆորտ», հանցավոր ենթամշակույթը տարածվում է անչափահասների շրջանում, ինչպես նաև անչափահասներին փոխանցում են իրենց հանցավոր փորձը՝ նրանց մոտ ձևավորելով և զարգացնելով հանցավոր հմտություններ:

3. Միջանձնային շփման գերիշխող դերը կանխորոշում է համատեղ հանցավոր գործունեությունը, իսկ հանցանքի կատարումն այն միջոցն է, որով անչափահասը հասնում է խմբում ներգրավված և պահանջված լինելու

նպատակին՝ ձեռք բերելով հանցավոր փորձ և անհատական հանցավոր «կարիերա» սկսելու ինքնավստահություն:

4. Անչափահասների հանցավոր խմբերը փորձ ձեռք բերելուն զուգահեռ ընդլայնում են իրենց գործունեության աշխարհագրությունը, վերածվում են «շրջագայող (գաստրոլյոր) խմբերի»՝ թիրախավորելով առավել մեծ քաղաքները (հատկապես՝ Երևանը):

5. Անչափահասների հանցավոր խմբերի նկատմամբ պրոֆիլակտիկ ներգործության արդյունավետության տեսանկյունից ոչ թե անհատապես անչափահասը, այլ հանցավոր խումբը պետք է վերցվի պրոֆիլակտիկ հաշվառման, քանի որ անչափահասը հանցավոր վարքագիծ է դրսևորում և վտանգավոր է հենց խմբի կազմում: Հետևաբար՝ կանխարգելիչ ներգործությունը պետք է ուղղված լինի ոչ միայն խմբի անչափահաս անդամներին առանձին-առանձին, այլ նաև խմբին՝ ամբողջությամբ վերցրած:

6. Հատուկ կանխարգելման արդյունավետության տեսանկյունից անհրաժեշտ է սահմանազատել անչափահասների գործերով և ընտանեկան բռնությունների կանխարգելման գործերով տեսուչների գործառույթները: Անհրաժեշտ է սահմանել անչափահասների և ընտանեկան բռնությունների կանխարգելման գործերով տեսուչների առանձին մասնագիտացումներ, մինչդեռ գործողության մեջ դրված «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքով անչափահասների գործերով տեսուչների գործունեության ոլորտն ընդլայնվեց՝ ներառելով նաև ընտանեկան բռնության վերաբերյալ գործերը:

7. Դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների արդյունավետ կիրառման նպատակով անհրաժեշտ է ստեղծել հատուկ դաստիարակչական կենտրոն, որտեղ յուրաքանչյուր անչափահասի նկատմամբ կցուցաբերվի տարբերակված մոտեցում՝ հոգեբանամանկավարժական միջոցների ներգործությամբ:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ այն հայրենական կրիմինալոգիայի մեջ անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման հիմնախնդիրների վերաբերյալ կատարված ա-

ռաջին համալիր հետազոտությունն է, որի արդյունքները կարող են օգտագործվել հետագա գիտական ուսումնասիրություններում: Հետազոտության գործնական նշանակությունն այն է, որ դրա արդյունքները կարող են օգտագործվել օրենսդրության կատարելագործմանն ուղղված օրինաստեղծ գործունեության ընթացքում, իրավակիրառ պրակտիկայում, ինչպես նաև ուսումնական գործընթացում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսության հիմնական դրույթները և եզրահանգումները քննարկվել են Երևանի պետական համալսարանի քրեական իրավունքի ամբիոնում, տեղ են գտել հեղինակի կողմից ատենախոսության թեմայով հրապարակված և դրա բովանդակությունն արտացոլող գիտական հոդվածներում, ինչպես նաև օգտագործվում են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի դասավանդման գործընթացում՝ «Անչափահասների կողմից կատարվող իրավախախտումների պրոֆիլակտիկա» դասընթացում և ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման ստորաբաժանման ծառայողների վերապատրաստման ընթացքում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, որոնք ներառում են յոթ պարագրաֆ, եզրակացությունից, հավելվածներից և օգտագործված նորմատիվ իրավական ակտերի ու գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում ներկայացվել են հետազոտության թեմայի արդիականությունը, մշակվածության աստիճանը, օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, հետազոտության մեթոդաբանական, տեսական, իրավական և փորձառական հիմքերը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները:

«Անչափահասների խմբային հանցավորության կրիմինալոգիական բնութագիրը» վերտառությունը կրող **1-ին գլուխը** բաղկացած է հինգ պարագրաֆից:

«Անչափահասների խմբային հանցավորության հասկացությունը» վերտառությամբ **1.1 պարագրաֆում** ուսումնասիրվել է անչափահասի

հասկացությունն ինչպես արտասահմանյան երկրների օրենսդրությամբ, այնպես էլ Հայաստանի Հանրապետության, համատեղ հանցավոր գործունեության էությունը, անչափահասների հանցավոր խմբերի հասկացությունը, վեր է հանվել անչափահասների խմբային հանցավորության առանձնահատկությունները: Այդ ամենի հիման վրա տրվել է անչափահասների խմբային հանցավորության հասկացությունը:

«Անչափահասների խմբային հանցավորության վիճակը, շարժընթացը և կառուցվածքը» վերտառությամբ **1.2 պարագրաֆում** հեղինակն ուսումնասիրել է անչափահասների խմբային հանցավորության քանակական և որակական բնութագիրը: Մասնավորապես, ըստ պաշտոնական վիճակագրական տվյալների, 2004-2018թթ.-ների ժամանակահատվածում վերլուծել է անչափահասների խմբային հանցավորության տեսակարար կշիռը՝ անչափահասների ընդհանուր հանցավորության կառուցվածքում, մակարդակի գործակիցը, ինչպես նաև տարածվածությունն ու շարժընթացը՝ ըստ Երևան քաղաքի և մարզերի: Այնուհետև հեղինակն անդրադարձել է անչափահասների խմբային հանցավորության կառուցվածքի և շարժընթացի վերլուծությանը, որի արդյունքում էլ բացահայտել է անչափահասների խմբային հանցավորության զարգացման միտումները:

«Անչափահասների հանցավոր խմբերի տիպաբանությունը» վերտառությամբ **1.3 պարագրաֆում** հեղինակը Հայաստանի Հանրապետությունում անչափահասների հանցավոր խմբերի վերլուծության համար իրականացրել է 2010-2017թթ. ընթացքում անչափահասների մասնակցությամբ խմբերի վերաբերյալ քննված 292 քրեական գործերի և դրանց կապակցությամբ կայացված դատավճիռների ուսումնասիրություն: Կատարված հետազոտության արդյունքում հեղինակն առանձնացրել է այն հատկանիշները, որոնք դրվել են անչափահասների հանցավոր խմբերի տիպաբանության հիմքում: Մասնավորապես, ըստ խմբի անդամների քանակի՝ անչափահասների հանցավոր խմբերն դասակարգել է՝ փոքր (բաղկացած 2-3 անձից) և մեծ խմբերի (4 և ավելի անձից), ըստ տարիքային հատկանիշի՝ միայն անչափահասներից բաղկացած (մաքուր խմբեր) և անչափահասներից ու չափահասներից կազմված կամ, այսպես կոչված, խառը խմբեր, ըստ կայունության հատկանիշի՝ անկայուն, հարաբերականորեն կայուն և կազմակերպված: Ուսումնասիրվել է անչափահասների հանցավոր խմբերի

յուրաքանչյուր տիպի տարածվածության մակարդակը, հանցավոր գործունեությունը, հասարակական վտանգավորությունը:

«Խմբի կազմում հանցանք կատարած անչափահասի կրիմինալոգիական բնութագիրը» վերտառությամբ **1.4 պարագրաֆում** հեղինակը վերլուծել է խմբի կազմում հանցանք կատարած անչափահասի կրիմինալոգիական բնութագիրն ըստ սոցիալ-ժողովրդագրական, բարոյահոգեբանական և քրեաիրավական հատկանիշների: Հետազոտությունը կառուցվել է ինչպես 2010-2017թթ. ընթացքում անչափահասների մասնակցությամբ խմբերի վերաբերյալ քննված 292 քրեական գործերի և դրանց կապակցությամբ կայացված դատավճիռների ուսումնասիրության (ուսումնասիրվել է խմբի կազմում հանցանք կատարած 516 անչափահասի անձ), այնպես էլ հեղինակի կողմից 2010-2017թթ. ընթացքում խմբի կազմում հանցանք կատարած 100 անչափահասների շրջանում իրականացված սոցիոլոգիական հարցումների արդյունքների հիման վրա:

«Անչափահասների խմբային հանցավորությանը նպաստող գործոնները» վերտառությամբ **1.5 պարագրաֆում** հեղինակը վերհանել է ինչպես անչափահասների կենսագործունեության տարբեր ոլորտներում, այնպես էլ սոցիալականացման գործընթացում առկա այն բացասական հանգամանքները, որոնք նպաստում են անչափահասների հանցավոր խմբերի ձևավորմանը և դրանց հանցավոր գործունեությանը:

«Անչափահասների խմբային հանցավորության կանխարգելումը» վերտառությունը կրող **2-րդ գլուխը** բաղկացած է երկու պարագրաֆից:

«Անչափահասների խմբային հանցավորության ընդհանուր (սոցիալական) կանխարգելումը» վերնագրով **2.1 պարագրաֆում** հեղինակը քննարկել է անչափահասների խմբային հանցավորության ընդհանուր կանխարգելման միջոցառումները, որոնք ուղղված կլինեն անչափահասների սոցիալական միջավայրի առողջացմանը, նրանց դրական զբաղվածության ապահովմանը, ինչպես նաև անչափահաս ունեցող ընտանիքների բարեկեցությանը:

«Անչափահասների խմբային հանցավորության հատուկ (կրիմինալոգիական) կանխարգելումը» վերտառությամբ **2.2 պարագրաֆում** կատարված ուսումնասիրության արդյունքներով հեղինակն առանձնացրել է այն ուղղությունները և միջոցները, որոնք կնպաստեն անչափահասների

խմբային հանցավորության կանխարգելմանը:

Եզրակացությունում, ի լրումն պաշտպանության ներկայացվող դրույթների, ներկայացվել են հետևյալ եզրահանգումներն ու առաջարկությունները.

1. Անչափահասների խմբային հանցավորությունն առաջարկվում է սահմանել որպես սոցիալական, իրավական, հարաբերականորեն զանգվածային երևույթ, որն իրենից ներկայացնում է կոնկրետ տարածքում և կոնկրետ ժամանակահատվածում անչափահասների հանցավոր խմբերի կողմից կատարվող հանրորեն վտանգավոր արաքների ամբողջություն:

2. Անչափահասների խմբային հանցավորության ոլորտում կրիմինալոգիական վերահսկողության օբյեկտ պետք է համարել հանրորեն վտանգավոր արարքներ կատարած 10-18 տարեկան անձանց:

3. Խմբի հասարակական վտանգավորությունն առավել բարձր է, երբ նրա կազմում գործում են նախկինում դատապարտված և հանցավոր փորձ ունեցող մասնակիցներ:

4. Անպատժելիությունը բերում է անչափահասների կայուն քրեածին խմբերի ձևավորման, խմբային հանցավորության քանակական և որակական ցուցանիշների բացասական փոփոխության:

5. Հանցագործության կատարումը հաճախ այն միջոցն է, որով անչափահասը հասնում է խմբում ներգրավված և պահանջված լինելու նպատակին:

6. Հանցավոր խմբի կազմում անչափահասը ձեռք է բերում հանցավոր փորձ և ինքնավստահություն, որը հնարավորություն է տալիս անհատական հանցավոր «կարիերա» սկսելուն:

7. Անչափահասների հանցավոր խմբերը փորձ ձեռք բերելուն զուգահեռ ընդլայնում են իրենց գործունեության աշխարհագրությունը, վերածվում են «շրջագայող գաստրոլյոր խմբերի»՝ թիրախավորելով առավել մեծ քաղաքները (հատկապես՝ Երևանը):

8. Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ըստ կազմի ՀՀ-ում առավել տարածված են անչափահասների հանցավոր փոքր և խառը խմբերը: Վերջիններս առավել վտանգավոր են, քանի որ, ի տարբերություն միայն անչափահասներից բաղկացած հանցավոր խմբերի, բացի շահադիտական հանցագործություններից կատարում են նաև բռնի հանցանքներ:

9. Անչափահասների հանցավոր խմբերը, ըստ կայունության հատկանիշի, առաջարկվում է դասակարգել երեք տիպի՝ անկայուն, համեմատաբար կայուն և կազմակերպված:

10. Անկայուն խմբերին բնութագրական են հանցավոր գործունեության կարճ ժամանակահատվածը, կատարված հանցանքների ոչ մեծ քանակը, փոքր խմբերի մեծ տեսակարար կշիռը:

11. Հարաբերականորեն կայուն խմբերին բնութագրական են հանցավոր գործունեության համեմատաբար երկար ժամանակահատվածը՝ (մի քանի ամսից մինչև տարի, երբեմն էլ ավել), նախորդ տիպի հետ համեմատած հանցագործությունների համեմատաբար մեծ քանակը, հանցագործությունների բնույթի փոփոխությունը, անչափահասների վրա առավել ուժեղ ներգործությունը:

12. Կազմակերպված խմբերին հատուկ են երեք կամ ավելի անձանց համատեղ հանցավոր գործունեությունը, խմբի անդամների միջև դերաբաշխումը, զինվածությունը, հանցավոր գործունեության տևականությունը, հանցագործությունների ծանրության աստիճանի որակական փոփոխությունը:

13. Սոցիալական վերահսկողության բացակայությունը կամ դրա սահմանափակ հնարավորությունները նպաստում են հիմնական դպրոցի և նախնական կամ միջին մասնագիտական կրթական հաստատությունների սովորողների քրեական ակտիվության աճին, որի արդյունքում ավելի դյուրին է դառնում նրանց հավաքագրումն անչափահասների հանցավոր խումբ:

14. Անչափահասների խմբային հանցավորությանը նպաստող գործոնները մեծամասամբ ուղղակիորեն կախված են ինչպես ընտանիքի ոչ բավարար նյութական ապահովվածությունից, այնպես էլ ընտանիքի անդամների միջև փոխհարաբերությունների բացասական բնույթից, ինչն էլ խոչընդոտում է երեխաների դրական սոցիալականացմանը:

15. Անչափահասների խմբային հանցավորության կառուցվածքում շահադիտական հանցագործությունների տեսակարար բարձր կշիռը պայմանավորված է սոցիալ-կենցաղային և ժամանցային ոլորտներում նրանց պահանջմունքների անընդհատ աճով՝ ի հակառակ անչափահասների սահմանափակ հնարավորությունների:

16. Հանցավոր խմբերում անչափահասների ընդգրկվելուն հաճախ նպաստում է ծնողների կողմից դաստիարակության գործառույթի իրականացման, երեխաներին աջակցություն ցուցաբերելու անընդունակությունը, որի արդյունքում քայքայվում են հուզական ներընտանեկան կապերը, ինչը հանգեցնում է ծնողների և երեխաների միջև կոնֆլիկտների:

17. Հանցավոր խմբերում անչափահասների ընդգրկվելուն հաճախ նպաստում է նաև երեխաների հանդեպ ուսուցչի անտարբերությունը, խստրական մոտեցումը, ուսուցչական կազմի մասնագիտական և հոգեբանական պատրաստվածության ցածր մակարդակը, ինչի արդյունքում վերանում է ուսուցիչ-աշակերտ հոգեբանական կապը: Վերջնարդյունքում կրթական համակարգը կորցնում է հակաքրեածին ներուժը և անչափահասը սկսում է որոնել սոցիալական կապեր՝ հակահասարակական խումբ մտնելու ճանապարհով:

18. Անչափահասների հանցավորության կանխարգելման մասնագիտացված սուբյեկտի գործունեության ոչ պատշաճ կազմակերպումը և իրավական կարգավորումը հանգեցնում են այդ ոլորտում պետության ռեսուրսների անարդյունավետ օգտագործման: Այս հանգամանքը պայմանավորում է տվյալ ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական համապարփակ ակտի անհապաղ ընդունման անհրաժեշտությունը և տվյալ սուբյեկտի գործունեության արդյունավետ կառավարման մոդելի ներդրումը:

19. Անչափահասների հանցավոր խմբերի նկատմամբ պրոֆիլակտիկ ներգործության արդյունավետության տեսանկյունից ոչ թե անհատապես անչափահասը, այլ հանցավոր խումբը պետք է վերցվի պրոֆիլակտիկ հաշվառման:

20. Բակային ազատ ժամանցի արդյունավետ կազմակերպումը էականորեն կխոչընդոտի ոչ ֆորմալ խմբերի՝ «հանցավորի» վերաճելու գործընթացը:

21. Հատուկ կանխարգելման արդյունավետության տեսանկյունից անհրաժեշտ է սահմանազատել անչափահասների և ընտանեկան բռնությունների կանխարգելման գործերով տեսուչների գործառույթները:

22. Անհրաժեշտ է քրեակատարողական հիմնարկում ապահովել մասնագիտական պատրաստվածության պատշաճ որակ, խմբային պրոֆիլակտիկայի մարտավարության մշակում և ներդրում, խմբի անդամների

միմյանցից մեկուսի՝ ազատազրկման ձևով պատժի կրման հնարավորություն:

23. Դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների արդյունավետ կիրառման նպատակով անհրաժեշտ է ստեղծել հատուկ դաստիարակչական կենտրոն, որտեղ յուրաքանչյուր անչափահասի նկատմամբ կցուցաբերվի տարբերակված մոտեցում՝ հոգեբանամանկավարժական միջոցների ներգործությամբ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1) Խաչատրյան Հ., «Անչափահասների խմբային հանցավորության ընդհանուր բնութագիրն ու կանխարգելման առանձնահատկությունները», Դատական իշխանություն գիտամեթոդական ամսագիր, Երևան, 2015, №8-9 (193-194), էջեր 122-125:

2) Խաչատրյան Հ., «Անչափահասների խմբային հանցավորության զարգացման միտումները Հայաստանի Հանրապետությունում», Պետություն և իրավունք, Երևան, N1 (71) 2016, էջեր 95-102:

3) Խաչատրյան Հ., «Անչափահասների հանցավոր խմբերի տիպաբանությունն ըստ կայունության հատկանիշի», Օրինականություն, Երևան, 2018, № 104, էջեր 5-10:

4) Խաչատրյան Հ., «Խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների սոցիալ-ժողովրդագրական բնութագիրը», Օրինականություն, Երևան, N105 2018, էջեր 3-7:

5) Խաչատրյան Հ., «Խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների բնութագրի առանձնահատկությունները (ըստ բարոյահոգեբանական հատկանիշների)», Դատական իշխանություն գիտամեթոդական ամսագիր, Երևան, 2018, №9-10 (231-232), էջեր 61-66:

6) Խաչատրյան Հ., «Խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների քրեաիրավական հատկանիշների բնութագիրը», Դատական իշխանություն գիտամեթոդական ամսագիր, Երևան, 2018 №11-12 (233-234), էջեր 29-35:

7) Խաչատրյան Հ., «Անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման որոշ հարցեր», «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագիր, Երևան, 2019, № 7, էջեր 18-26:

8) Խաչատրյան Հ., «Անչափահասների խմբային հանցավորությանը նպաստող որոշ գործոնների վերլուծություն», Օրինականություն, Երևան, 2019, № 110, էջեր 14-21:

9) Խաչատրյան Հ., «Անչափահասների խմբային հանցավորության ընդհանուր (սոցիալական) կանխարգելման հարցերի շուրջ», Օրինակա-նություն, Երևան, 2019, № 111, էջեր 17-23:

ХАЧАТРЯН РИПСИМЕ МГЕРОВНА

ПРОБЛЕМЫ ПРЕДУПРЕЖДЕНИЯ ГРУППОВОЙ ПРЕСТУПНОСТИ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ В РА

РЕЗЮМЕ

Предупреждение преступности - одно из направлений уголовной политики государства. В этом плане важно изучение проблемы предупреждения преступности несовершеннолетних. Всестороннее и комплексное исследование преступности несовершеннолетних, которые считаются будущим преступности, является одним из приоритетных направлений политики противодействия преступности.

Политику по предупреждению групповой преступности несовершеннолетних необходимо строить с учетом ряда специфических особенностей, характеризующих несовершеннолетних: беззащитность, беспомощность, высокая эмоциональность, нехватка жизненного опыта, психологический дисбаланс, уязвимость, стремление привлечь внимание, потребность отличаться от других, чувство дружбы и групповой солидарности.

В системе общего предупреждения групповой преступности несовершеннолетних первостепенное значение должны иметь средства, направленные на защиту прав и законных интересов несовершеннолетних, охрану здоровья, поддержку и укрепление семьи, правильную организацию образования, работы и досуга, защиту от негативных воздействий, вовлечение в преступную деятельность, а также на улучшение воспитания и формирование позитивного досуга несовершеннолетних в семье, в школе.

До сих пор групповая преступность несовершеннолетних изучалась и обсуждалась в контексте общей преступности несовершеннолетних. Всесторонне не были изучены и раскрыты особенности групповой преступности несовершеннолетних, тенденции развития, типы преступных групп несовершеннолетних, характерные особенности несовершеннолетнего, совершившего преступление в составе группы, причины и условия групповой преступности несовершеннолетних, а следовательно, возможности и средства её предупреждения.

Актуальность темы исследования обусловлена также рядом других обстоятельств. Во-первых, до сих пор в Армении не было проведено комплексного исследования групповой преступности несовершеннолетних, благодаря которому можно было бы выявить как количественную, так и качественную характеристику преступных групп несовершеннолетних. Во-вторых, если до 2000г. в групповых преступлениях несовершеннолетних преобладали преступные деяния, совершаемые группами, состоящими только из несовершеннолетних, то после 2000 года растет удельный вес

преступных деяний, совершаемых смешанными группами. В-третьих, совершение группами несовершеннолетних преступных деяний, характерных для взрослых. В частности, похищение человека, вымогательство, незаконный оборот оружия, насильственные действия сексуального характера и т. д. Кроме того, профилактика групповой преступности несовершеннолетних до сих пор строилась только вокруг индивидуальной профилактики. Не умаляя её значимости, заметим, что в данном случае несовершеннолетний опасен в составе группы, поскольку вошел в неё из-за того, что лишен способности самостоятельно совершить преступление. Следовательно, в первую очередь, нужно подвергнуть профилактическому воздействию группу, а потом несовершеннолетнего.

В рамках диссертации автором были изучены: статистические данные о групповой преступности несовершеннолетних за период с 2004 по 2018гг; приговоры, вынесенные по 292 уголовным делам, рассмотренным в ходе расследования, в отношении групп с участием несовершеннолетних с 2010 по 2017 гг.; социологические опросы с 2010 по 2017гг., проведенные среди 100 несовершеннолетних, совершивших преступление в составе группы; результаты экспертных опросов, проведенных среди 150 инспекторов по делам несовершеннолетних полиции РА за период с 2013 по 2018 гг. На основе изученных данных автором была дана криминологическая характеристика групповой преступности несовершеннолетних и разработаны предложения по мерам предупреждения.

Научная новизна диссертации состоит в том, что в отечественной криминологии впервые была предпринята попытка провести всесторонний теоретический и практический анализ проблем предупреждения групповой преступности несовершеннолетних в РА. Научная новизна диссертации, в первую очередь, отражена в представленных на защиту положениях, а также в представленных в заключении выводах и предложениях.

Диссертация имеет не только теоретическое, но и практическое значение, так как представленные выводы и предложения могут быть использованы не только в научных исследованиях, но и в законотворческой деятельности, правоприменительной практике и учебном процессе.

Диссертация обсуждена на кафедре уголовного права ЕГУ. Основные положения диссертации отражены в опубликованных научных статьях автора, а также используются в процессе преподавания учебной дисциплины "Профилактика правонарушений, совершаемых несовершеннолетними " в Образовательном комплексе полиции РА и на курсах переподготовки сотрудников подразделения Полиции РА по делам несовершеннолетних и предупреждению насилия в семье.

HRIPSIME MHER KHATCHATRYAN

THE PROBLEMS OF PREVENTION OF THE JUVENILES GROUP CRIME IN THE RA

RESUME

One of the manifestations of the State criminal policy is the prevention of crime. In this regard, it is important to study the problem of preventing juvenile crime. A comprehensive and complex research of juvenile crime, which is considered to be the future of crime, is one of the priorities of the policy of the crime resistance.

The juvenile group crime prevention policy needs to be built taking into account a number of specific features that characterize the minors: defenselessness, helplessness, high emotionality, lack of life experience, psychological imbalance, vulnerability, desire to attract attention, the need to be different from others, a sense of friendship and group solidarity.

Means aimed at protecting the rights and legitimate interests of minors, health care, family support and consolidation, the proper organization of education, work and leisure, protection from negative influence, involvement into the criminal activity as well as at the improvement of the upbringing and the formation of positive leisure for juveniles in the family, at school should be of primary importance in the system of the general prevention of juvenile group crime.

Until now, the juvenile group crime has been studied and discussed in the context of general juvenile crime. The features of juvenile group crime, the development trends, the types of juvenile group crime, the characteristic peculiarities of the juvenile who committed the crime as a part of the group, the causes and conditions of juvenile group crime, and, consequently, the possibilities and means of preventing it, have not been comprehensively studied and disclosed.

The relevance of the research topic is also due to a number of other circumstances. Firstly, until now, there has not been conducted a complex study of juvenile offence in Armenia due to which both quantitative and qualitative characteristics of juvenile group crime would be possible to identify. Secondly, if, before 2000, group crimes of the juveniles were dominated by criminal acts committed by groups consisting of only juveniles, thus, after 2000 the proportion of criminal acts committed by mixed groups grows up. Thirdly, groups of juveniles commit criminal acts typical of adults, in particular

kidnapping, extortion, illegal arms trafficking, sexual assaults, etc. Besides, the prevention of juvenile group crimes has so far only been built around the individual prevention. Without diminishing its significance, we should note that in this case the minor is dangerous in the group, as he joined it because he is deprived of the ability to commit an independent crime. Therefore, first of all, it is necessary to expose the preventive effect of the group, and then of the minor.

Within the scope of the dissertation, the author has studied: statistical data on juvenile group crime for the period from 2004 to 2018; sentences imposed on 292 criminal cases related to the groups involving minors that were examined during the investigation from 2010 to 2017; sociological polls surveyed among 100 minors who committed a crime as part of a group from 2010 to 2017; the results of expert surveys conducted among 150 inspectors on juvenile affairs of the RA Police for the period from 2013 to 2018. Based on the studied data, the author gave criminological characteristics of juvenile group crime and proposals for preventive measures were developed.

The scientific novelty of the dissertation is that, in the framework of the domestic criminology, for the first time an attempt was made to conduct a comprehensive theoretical and practical analysis of the problems of preventing juvenile group crime in the Republic of Armenia. The scientific novelty of the dissertation is primarily reflected in the theses submitted for the defense, as well as in the conclusions and suggestions presented in the conclusion.

The dissertation has not only theoretical, but also practical significance, since the presented conclusions and suggestions can be used not only in the scientific research, but also in the legislative activity, law enforcement practice and the educational process.

The dissertation was discussed at the Department of Criminal Law of the YSU. The main provisions of the dissertation are reflected in the published scientific articles of the author, and are also used in the teaching process of the discipline "The Prevention of Juvenile Offence" in the Educational Complex of the RA Police and in the retraining courses for the collaborators of the RA Police subdivision of the juvenile affairs and the prevention of domestic violence.